ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼՔ

ԼՈՐՏ ԵԴ. ԼԻԴԴԸՆ ՊՈՒԼՎԸՐ անգղիացի անուանի վիպասան:

Ո. Ս. ՏԸ ՌՈՒԺԷ գաղղիացի մեծահամբաւ եգիպտագէտ:

ԿԱՐՈԼՈՍ ՏԻՒԲԷՆ գաղղիացի՝ ակրութեան պաշտօնեայ:

ԴՈՄԻՆԻԿՈՍ ՄԱԻՐՈՅ իտալացի հայրենասէր ծերունի, ձախակողմեան երեսփոխան:

ՓՌԱՆԿԻՍԿՈՍ ՏԱԼ՛ՕՆԿԱՐՈՅ վենետկեցի անուանի բանաստեղծ:

ԼՈՒԴՈՒԻԿ ՏԷ ՊԷՆԷՏԻՔԴԻՍ նշանաւոր գրագէտ, մեծապէս սիրող Ուգոյ Ֆոսքոլոյի:

ՆԱԲՈԼԷՈՆ Գ. Գաղղիացւոց անկեալ կայսրը, մեռեալ 'ի Չիզլհըրստ:

ՊԵՏՐՈՍ ԲԷՔԱՐՍՔԻ ռուս պատմագիր, անդամ Բիէդրբուրկի ակադեմիային:

ՅՈՎՍԷՓ ԴԷՐՅԱԿԻ անուանի մարդասէր բժիշկ միլանեցի և տնտեսագէտ:

ՄԱՔՍ ՎԱՅՏ մեծանուն զուարճաբան ֆիամմինկ գրագէտ:

ԴԱԼԷՏ ՊԷՌՆԱՐ բարիզեցի գրագէտ, հեղինակ դիցաբանական բառագրոց և բանաստեղծութեան պատմութեան:

Գ. Ա. ՊՐԻՒԼԼԷ գաղղիացի բնապատում ու փիլիսոփայ, մեռեալ 'ի Տիժոն:

Ի. Բ. Հ. ՔԱԲՖԻԿ գաղղիացի երևելի պատմագիր, հեղինակ գաղղիական զանազան մասնական պատմութեանց, որք բովանդակապէս կը ձևացնեն 80 հատոր գաղղիական պատմութիւն. ծնեալ 'ի Մարսիլիա 'ի 1802:

ՅՈՒԼԻՈՍ ՖՈՒԷՐՍԴ անուանի եբրայագէտ հրեայ–գերմանացի:

ՄԻՔԱՅԷԼ ՀՄԻՐՈՎ ռուս գրագէտ, մեռեալ յանօթութենէ 'ի Բիէդրբուրկ 42 տարեկան: Կ'ըսուի թէ զարմանալի խնայողական մատենադարան մը կազմած էր 12,000 հատոր Ռուսիոյ վերաբերեալ ձեռք բերած յօդուածները լրագրաց մէջէն կտրելով և իրար կցելով:

Մ. ՔԱՉԷՆՈՎՍՔԻ ռուս իրաւագէտ, մեռեալ 'ի Քարքով, ուր կը վարժապետէր:

ՀԵՆՐԻԿ ՔՈՒՐՑ չինագէտ, գերմանական գրագիտութեան պատմիչ, նշանաւոր հակառակորդ եկեղեցական կուսակցութեան 'ի Զուիցցերի. ծընեալ 'ի Բարիզ 'ի 1805. ուստի հալածուելով չափազանց ազատակրօն կարծեացն համար և բանտուելով 'ի Պավիէրա, Զուիցցերի հաստատուած էր և Աարոյի գրապետն էր, և կը դասախօսէր անխոնջ աշխատասիրութեամբ:

ՓՌԱՆԿԻՍԿՈՍ ԻՆԿԱՆՆԻ քաջ նկարիչ լոմպարտացի՝ մեռեալ Վարէզէի մօտ 78 տարեկան:

ՍՏԱՆԻՍԼԱՒ ԺՈՒԼԻԷՆ գաղղիացի անուանի չինագէտ:

Բ. Գ. ՄԱՃՃԻ անդամ Լոմպարտիոյ ուսումնարանին, շատ հմտագէտ և քաջ հնդիկ լեզուաց մէջ:

Դ. ՍՆԱՔԷՆՊՈՒՐԿ զինուորական ակադեմիային և Պեռլինու աղջկանց դպրոցի ուսուցիչ. Պեռլինու իտալական ընկերութեան նախագահ:

ՍԲԻՐԻՏԻՈՆ ԴՐԻՔՈՒՏԻՍ համբաւեալ յոյն պատմագիր և քաղաքագէտ:

ՅՈՎՍԷՓ ԱՐՔՈՆԱԴԻ ՎԻՍՔՈՆԴԻ Իտ. Թագաւորութեան ծերակուտի անդամ, մեռեալ 'ի Միլան 76 տարեկան:

ՅՈՎՍԷՓ ՔԱԴԼԷՆ ամերիկացի անուանի ճանապարհորդ և գրող ճանապարհորդութեանց:

ՔՈՒՐՔ (Church) հելլենասէր զօրավար, մեռեալ 97 տարեկան:

ՌԱՓԱՅԷԼ ԼԱՄՊՐՈՒՍՔԻՆԻ մեծարելի դատախազ, քաջ տեղեակ արուեստի հողագործութեան:

ՅՈՎՍԷՓ ԼԷՀՄԱՆ արգիւնաւոր հիմնարկող ու տպագրող անուանի ուսումնաթերթի 'ի Պեռլին:

ՄԱՏԹԷՈՍ ՄԱԻՐԻ ամերիկացի բնագէտ և աստղաբաշխ:

ԵՏՎԻՆ ՆՈՐՐԻՍ անգղիացի մեծահամբաւ լեզուագէտ և արևելագէտ, գլխաւորապէս ասորաբանութեան շատ նպաստամատոյց:

ՅՈՎՍԷՓ ԲԱԼՄԷՐ ԲՈՒԴՆԱՄ ամերիկացի ծանօթ տպագրիչ և հեղինակ:

ՎԻՍՔՈՆԴ ՏԸ ՌՈՒՍԷ գաղղիացի անուանի եգիպտագէտ:

ՊՕՂՈՍ ՍԷԿԻՒՐ կոմս, գղ. յարգելի պատմագիր, մեռեալ 'ի Բարիզ 93 տարուան:

ԱՄԷՏԷ ԹԻԷՐՐԻ գաղղիացի գերածայրեալ պատմագիր, մեռեալ 'ի Բարիզ, հեղինակ Պատմութեան Կեղտաց [?] երեք հատոր, եղբայր անուանի Օգոստինոս Թիէրրիի:

ԿԱՐՈԼՈՍ ԱԼԼՍԴՈՆ ՔՈԼԼԷՆՍ (Collins) անգղիացի նկարիչ և գրագէտ:

ԴՈՄԻՆԻԿՈՍ ՏՈՆՑԷԼԼԻ իտալացի անուանի երգիչ, մեռեալ 83 տարուան 'ի Պոլոնիա:

ՃԵՆԵՐԱԼ ՖՈՔՍ անգղիացի երևելի դրամագէտ:

ՍԷՆ ՄԱՐՔ ԺԻՐԱՐՏԷՆ գղ. անուանի մատենագիր և լրագրական յօդուած գրող, դասախօսող գրագիտութեան 'ի Սորպոն:

ՊԵՏՐՈՍ ԼԱՖՈՆ գաղղիացի գովելի դերասան, մեռեալ 72 տարուան:

ՃԻՈՒՍԴՈՅ ԼԻՊԻԿ մեծահամբաւ գերմանացի տարրաբան:

ԼՈԴԴՆԷՐ ուսուցիչ սանսքրիտ լեզուի Տըպլինի համալսարանին մէջ, աշակերտ Պոբի:

ԳՈՒԼԻԷԼՄՈՍ ԴԻԴ անգղիացի քաջ ճարտարապետ: